ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՏՈՆԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Փետրվարի 7-ին Հայ Առաքելական Եկեղեցին նշեց մեր ժողովրդի ամենասիրելի և մեծ ժողովրդականություն վայելող սրբերից մեկի՝ սիրո և բարի իղձերի հովանավոր Սուրբ Սարգիս զորավարի տոնը, որը նշանավորվում է նաև որպես երիտասարդների օրհնության օր:

Գուգարաց թեմի Սուրբ Սարգսի անունը կրող բոլոր եկեղեցիներում մատուցվեց Ս. Պատարագ, որին հաջորդեց երիտասարդների օրհնության կարգը: Վանաձորի Սուրբ Սարգիս եկեղեցին լի էր երիտասարդներով, ովքեր եկել էին իրենց աղոթքը բարձրացնելու առ Աստված և խնդրելու արագահաս սրբի բարեխոսությունն իրենց նվիրական իղձերի ու երազանքների իրականացման համար:

Հավարտ Ս. Պատարագի երիտասարդներն ստացան Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Զուլչյանի օրհնությանը:

Այս օրը Սուրբ Սարգիս եկեղեցու ուխտի օրն է նաև, և այդ առթիվ Պատարագի ավարտին եկեղեցու խաչքավոր Փափագ Ալոյանի կողմից բաժանվեց ուխտի մատաղ: Օրն ավելի տոնական դարձավ, երբ եկեղեցու բակում ոստիկանության աշխատակիցները, հովանավորությամբ ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ, գնդապետ Ա. Համբարյանի, երիտասարդներին նվիրեցին սեր և փոխադարձ հարգանք խորհրդանշող ծաղիկներ: Գնդապետ Համբարյանի կողմից ծաղիկներ բաժանվեցին նաև Լոռվա մարզի բոլոր եկեղեցիներում և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում:

Պատարագից հետո երիտասարդներն ուղևորվեցին դեպի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի, ուր ՎՊՄԻ-ի մանկավարժական ֆակուլտետի ուսանողների և թեմի Երիտասարդաց միության անդամների համատեղ ջանքերով կազմակերպվել էր տոնական հանդիսություն՝ նվիրված սիրո և երիտասարդության օրվան:

Միջոցառմանը բացման խոսքով ելույթ ունեցավ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վահան քհն. Ազարյանը:

Հանդիսությանը թեմական առաջնորդն իր օրհնության խոսքն ուղղելով երիտասարդներին ասաց. «Քրիստոնեական տոները ոչ միայն կրթում են մեր միտքն ու հոգին, վարքն ու բարքը, այլև վեհացնում ու ազնվացնում են մեր զգացմունքները: Սուրբ Սարգսի տոնը ևս մի առիթ է հատկապես երիտասարդների համար՝ դրսևորելու իրենց ազնվագույն զգացմունքներից վեհագույնը՝ Սերը»:

Միջոցառման մասնակիցները մանրամասն ներկայացրեցին Սուրբ Սարգիս զորավարի վարքը, որն ընդմիջվում էր Սուրբ Սարգիս եկեղեցու երգչախմբի կատարումներով՝ ղեկավարությամբ Անահիտ Ճուղուրյանի: Եկեղեցու սրահում բացվել էր ցուցահանդես, որտեղ ներկայացված էին ՎՊՄԻ-ի արվեստի ամբիոնի կերպարվեստի բաժնի ուսանողների դիպլոմային աշխատանքները:

Հանդիսությանը ներկա էին դասախոսներ, ուսանողներ, բարձր դասարանների աշակերտներ, տարբեր հասարակական կազմակերպությունների և միությունների ներկայացուցիչներ:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ